

Ն Ա Ի Ա Ս Ա Ր Գ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Ա. ՏԱՐԻ

Թի 12

ՅՈՒԼԻՍ 2003

ՅՈՒԹՊՈՒԻ ՄԻԶ-ՅԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ

ՀՊԱՐՏԱՌԻԹ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ, ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՐԶԻԿՆԵՐ

Եկե՛ք գրաւը դնենք պատանհներուն վրայ, երիտասարդներուն վրայ՝ առանց սակարկելու, առանց բացատրութիւն պահանջելու: Պատանհները, երիտասարդները պիտի յաղթեն եւ մենք պիտի շահինք այդ գրաւը: Անոնք յաղթելու, յառաջդիմելու եւ նոր գագաթներ նուաճելու համար մեզմէ հրաման պիտի չսպասեն, սակայն մեր օրհնութիւնը, մեր քաջալերանքը ոչ միայն զիրենք, այլեւ մեզ պիտի բարձրացնէ, որովհետեւ բաժնեկից պիտի ըլլանք անոնց նուաճումներուն:

Հին յաղթանակներով գինովնալու, փոշի կուտակած բաժակներ ցուցադրելու փոխարէն լծուինք երիտասարդ սերունդի ծառայութեան: Այո՛, ծառայութեան: Միայն անոնք չէ, որ մեզի պիտի ծառայեն. անոնց կը պատկանի ապագան, մինչ «հին»երը ունին անցեալն ու ներկան միայն: Եթէ մենք չծառայենք երիտասարդութեան, ապագայ պիտի չունենանք: Եթէ երիտասարդութիւնը ծառայեցնենք «հին»երուն, ապագայ պիտի չունենանք: Ի վերջոյ, միայն իր անցեալով հպարտացող ոչ չիւնչով տարբեր է գետնախրճորի տունկէն, որուն միակ օգտակարութիւնը... հղին տակն է:

Այսօր աշխարհի տարածքին ունինք սերունդ մը ախոյեաններու, որոնք հակառակ իրենց պատանհ տարիքին՝ արդէն մեր «հին»երէն շատ աւելի նուաճումներ արձանագրած են: Ապագայ խոստացող մարզիկներու պակասէ չի տառապիր նաեւ լիբանանահայ գաղութը՝ ըլլա՛յ պասքէպոլի, ֆութպոլի, փինկ փոնկի, ճատրակի թէ արեւելիկ մէջ:

Ծառայենք անոնց եւ պիտի բարձրանանք:



Անցեալ Կիրակի, ֆութպոլի միջ-ցամաքամասային մրցաշարի աւարտականին հիւրընկալ երկիրը՝ Ֆրանսա կոլպրն կոլով պարտութեան մարտնէց Քամերունը (1-0) եւ տիրացաւ տիրոջսին

ՍԱՆ ԱՆԹՈՆԻՕ ՍՓԸՐԶ ԴԱՐՉԵԱԼ ԷՆ. ՊԻ. ԷՅ.Ի ԱԽՈՅԵԱՆ



(Shahin էջ 4)

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՅԱԿՈՒՔ ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀԵՏ

(Shahin էջ 2-3)

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՎԵԹԵՐԱՆ ԱՍՏՂ՝ ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀԵՏ



մը ապահովել, սակայն կոլ չկրցանք նշանակել եւ դուրս մնացինք մրցաշարքէն:

Հակառակ ասոր, սակայն, մենք այդ օր Նըժմէի դէմ փաստեցինք, որ կրնանք նեղ կացութեան մատնել նոյնիսկ ամէնէն զօրաւոր խումբերը, լաւ ֆութպոլ խաղալով: Երթի մրցումը եղաւ ի նպաստ իրենց, մինչ դարձի մրցումը՝ ի նպաստ մեզի, սակայն մենք եղանք անբախտը:

Հ.- Արդեօք ի՞նչ ունիս ըսելիք մարզիչ Վաչէ Մարգիսեանի մասին: Յառաջիկայ եղանակին ան պիտի մնա՞յ իր պաշտօնին վրայ, թէ ոչ:

Ս. Պ.- Ան իբրեւ մարզիչ առաւելագոյնս կատարեց իր պաշտօնը եւ ոչ մէկ ժամանակ որեւէ հարց չունեցաւ խումբին մարզիկներուն հետ:

Անոր պաշտօնին վրայ մնալը մենք չէ, որ կ'որոշենք, այլ՝ խումբին պատասխանատուները եւ ի վերջոյ ինք:

Սակայն կը կարծեմ, որ ամէն տարի մարզիչ փոխելը իր դրական անդրադարձը չ'ունենար խումբին վրայ: Մարզիչ մը կու գայ եւ մէկ տարի հազիւ անցած՝ կը մեկնի, անոր յաջորդելով ուրիշ մը: Այս մէկը կը նշանակէ, թէ մարզիկները հազիւ ընտելացած կ'ըլլան իրենց նոր մարզիչին, յաջորդ տարին կ'ունենան ուրիշ մը, ինչ որ խումբին համար լաւ չէ եւ յառաջդիմութեան կաղացման պատճառ կը դառնայ:

Հ.- Ի՞նչ խօսք ունիք ըսելիք Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն մասին:

Ս. Պ.- Համակիրներուն մասին ժխտական ոչ իսկ մէկ խօսք կրնանք ըսել: Անոնց միայն ու միայն կրնանք ըսել, որ մեծապէս շնորհակալ ենք, խումբին նկատմամբ իրենց զոհողութեան համար:

Կ'ըսեն թէ խումբին 12րդ մարզիկը համակիրն է: Սակայն ես կու գամ ըսելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրը խումբին ոչ թէ 12րդ մարզիկը, այլ՝ 11րդ մարզիկն է: Անոնք միշտ ալ դաշտ կը ներկայանան առաջին տասնմէկին մէջ: Խումբին 12րդ մարզիկը նստած է պահեստի նստարաններուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները պիտի շարունակեն միշտ ալ լիբանանեան դաշտերուն վրայ մնալ օրինակելի համակիրներ, միայն ու միայն մտածելով Հ.Մ.Ը.Մ.ի շահերը:

Հ.- Հրաժեշտի մրցում կատարեցիր, որմէ ետք վերադարձար կանաչ դաշտերը, ի՞նչպէս կը բացատրես այս հանելուկը:

ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ.- Հակառակ ֆութպոլի հրաժեշտ տալու, այո՛, վերադարձայ եւ միացայ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին, որովհետեւ խումբը կը գտնուէր Բ. դասակարգ եւ իր փորձառու մարզիկներուն պէտք ունէր՝ վերստին բարձրանալու համար Ա. դասակարգ:

Վստահաբար չէի կրնար ինձի կատարուած դիմումը մերժել, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի շահերը վեր են ամէն շահերէ:

Փորձառու մարզիկներով յաջողեցանք յոյս ներշնչել երիտասարդ մարզիկներուն եւ միշտ զիրար քաջալերելով եւ յաղթանակներ արձանագրելով յաջողեցանք մեր առաքելութեան մէջ:

Մարզիչ - մարզիկ, ինչպէս նաեւ պատասխանատու եւ համակիր միշտ իրարու հետ սերտ յարաբերութիւններ մշակելով, միասնաբար կերտեցինք յաղթանակներ: Ցանկալի է սակայն, որ այս ընթացքը շարունակուի ապագային եւս, եւ բոլորս միշտ իրարու հետ անքակտելի կապով մը լաւ արդիւնքներ արձանագրենք:

Հ.- Թէեւ Լիբանանի ֆութպոլի բաժակի մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի դարձի մրցումէն կը բացակայէիր (կախակայուած ըլլալով), սակայն ի՞նչ էր պատճառը, որ խումբը այդ օր բացառիկ մրցում մը կատարեց, մինչ երթի մրցումին՝ ոչ:

Ս. Պ.- Երթի մրցումին պատճառը յայտնի էր: Նկատի ունենալով որ Նըժմէ իր յոյսերը կորսնցուց ախոյեանութեան տիտղոսին տիրանալու, իր եղանակը որոշ չափով փրկելու համար ոչ մէկ ճիգ խնայեց յաղթանակ արձանագրելու Հ.Մ.Ը.Մ.ի դէմ, եւ յաջողեցաւ:

Իսկ դարձի մրցումին, նկատի ունենալով, որ մենք կորսնցնելու ոչինչ ունէինք, փորձեցինք ամէն գնով աւարտական մրցումին տոմս

www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com


ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՍՏՂ՝ ՅԱԿՈՒԲ ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ

ՀԱՐՑՈՒՄ.- 2002-2003 եղանակը ի՞նչ ձեռով սկսաւ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆութպոլի ներկայացուցչական խումբին համար: Դիրքիդ վրայ որեւէ դժուարութիւն դիմագրաւեցի՞ր: Կրնա՞ս հակիրճ ձեռով ընդհանուր պատկեր մը տալ խումբին մասին:

ՅԱԿՈՒԲ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ.- Արդէն իսկ կացութիւնը բաւական յստակ էր, որ 2002-2003 եղանակին մաս կը կազմէինք Բ. դասակարգին. իրողութիւն մը, որմէ չէինք կրնար խուսափիլ:

Առաջնահերթ եւ հիմնական մէկ նպատակ ունէինք. ինչ ալ որ ըլլային պայմանները, վճռած էինք խումբը վերստին Ա. դասակարգ բարձրացնել: Այդ առաքելութեան մէջ լաւապէս յաջողեցանք եւ առանց ոչ իսկ մէկ պարտութիւն կրելու, խումբը յաջողեցանք վերադարձնել իր բնական դիրքին:

Վստահաբար այդ աշխատանքին մէջ իրենց մեծ բաժինը ունեցան խումբին փորձառու մարզիկները, որոնց կարգին՝ Վարդան Ղազարեան, Սամուէլ Պօղոսեան, Դրօ Քէհէյեան, Բաֆֆի Մուլֆայեան:



դէն իսկ խումբը կը կաղար, եւ ես առանձինս չէի կրնար զայն փրկել՝ Բ. դասակարգ փոխադրուել:

Սակայն այս եղանակին, սխալը սրբագրուեցաւ եւ մարզիչ Վաչէ Սարգիսեանի ցուցմունքներով եւ միասնաբար պայքարելով, եղանակի արտիստ քաղցիկներ մեր աշխատանքին պտուղը:

Անձամբ վստահաբար Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն ընթացքին որոշ դժուարութիւններ ունեցայ, որովհետեւ Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումները հաւատացէք աւելի դժուար են քան Ա. դասակարգի: Սակայն շնորհիւ իմ խմբակիցներուս յաջողեցայ լաւ արդիւնք արձանագրել:

Հ.- Եթէ բաղդատութիւն մը կատարես նախորդ եղանակին՝ 2001-2002ի հետ, երբ խումբը մաս կը կազմէր Ա. դասակարգին, կը կարծե՞ս, որ յառաջդիմութիւն մը կրցար ունենալ:

Յ. Տ.- Հ.Մ.Ը.Մ.Ի Բ. դասակարգ փոխադրուած տարին, եւ երթի մրցումներուն գրեթէ ներկայ չէի, որովհետեւ լիբանանեան բանակին մէջ զինուորական ծառայութիւնս կ'ընէի: Դարձի մրցումներուն վերադարձայ, բայց չկրցայ առաւելագոյն արդիւնքը տալ, որովհետեւ ար-



Հ.- Լիբանանի Ողիմպիականի խումբին հետ որքանո՞վ կրցար յաջողութիւն արձանագրել: Կարգ մը մրցումներու ընթացքին նկատի չառնուեցար, հակառակ անոր որ խումբին խմբապետն էիր:

Յ. Տ.- Լիբանանի մէջ ընդհանրապէս սովորական երեւոյթ դարձած է այն, որ ազգային խումբերը միշտ ալ մարզիչի փոփոխութեան հարց կ'ունենան: Զախող արդիւնքներ արձանագրող խումբին պատասխանատուն ընդհանրապէս կը նկատուի մարզիչը:

Այս տարի խումբին մարզիչ նշանակուեցաւ Ֆրանսացի Ռիշար Թարտին: Անոր օրերուն էր, որ խումբին խմբապետ նշանակուեցայ, նկատի ունենալով որ ես նախապէս արդէն իսկ մաս կը կազմէի ազգային խումբին, մինչ մնացեալ բոլորը նորեկներ էին:

Մարզիչներու փոփոխութեան հարցը երբեք ժխտական անդրադարձ չ'ունենար վրաս, որովհետեւ անոնց իրաքանչիւրէն տարբեր բան կը սորվիմ:

ՄԱՆ ԱՆԹՈՆԻՕ ՍՓԸՐԶ ԴԱՐՉԵԱԿ ԷՆ. ՊԻ. ԷՅ.Ի ԱԽՈՅԵԱՆ

Այս տարի, ինչպես նախորդ տարիներուն, ԷՆ. ՊԻ. Էյ.Ի եւ մանաւանդ փլէյ-օֆի մրցումները դարձեալ իրենց վրայ կեդրոնացուցին լուսարձակները եւ պասքեթպոլի սիրահարներուն ուշադրութիւնը, նկատի ունենալով, որ ԷՆ. ՊԻ. Էյ.Ի աշխարհի տարածքին ամէնէն աւելի հոշակ ու ժողովրդականութիւն վայելող պասքեթպոլի ախոյեանութիւնն է, իսկ անոր ախոյեանը առանց որեւէ առարկութեան կամ հարցման նշանի՝ աշխարհի լաւագոյն խումբն է:

Այս տարի նոյնպէս, միեւնոյն մթնոլորտը կը տիրէր ԷՆ. ՊԻ. Էյ.Ի մրցումներուն վրայ, սակայն պատկերը որոշ չափով տարբեր էր, որովհետեւ ազգային խումբերու աշխարհի ախոյեանութենէն ետք, օտար աստղերու թիւը աւելցած էր ԷՆ. ՊԻ. Էյ.Ի խումբերուն շարքերէն: Անոնք եւ այս աստղերը միանալով ամերիկացի աստղերու հոյլին յաջողած էին աշխարհի տարածքին աւելի մեծ ժողովրդականութիւն ապահովել ԷՆ. ՊԻ. Էյ.Ի:

Աւելի՛ն. այս տարի պասքեթպոլի եւ մանաւանդ Ուաշինկթըն Ուիզըրտի ու Սան Անթոնիօ Սփըրզի համակիրները վերջին անգամ ըլլալով հանդիսատես եղան ԷՆ. ՊԻ. Էյ.Ի պատմութեան էջերուն մէջ իրենց անունը ոսկեայ տառերով արձանագրած 2 աստղերու վերջին «ելոյթին»: Առաջինը՝ Մայքըլ Ժորտընն էր, որ յաջողեցաւ իր խումբը լաւ ձեւով առաջնորդել տարեշրջանի սկիզբէն իսկ եւ սակայն վերջին պահուն չկրցաւ իր խմբակիցներուն հետ ապահովել փլէյ-օֆի տոմսը, այսպիսով ԷՆ. ՊԻ. Էյ.Ի իր վերջին եղանակը բոլորելով առանց փլէյ-օֆի մրցումներուն մասնակից ըլլալու: Երկրորդ աստղը Տէյվիտ Ռոպինսընն էր, որ հակառակ Ժորտընին, կրցաւ Սան Անթոնիօ Սփըրզի իր խմբակիցներուն եւ մասնաւորապէս Թիմ Տանքընի հետ միասին սլանալ եւ հասնիլ ոչ միայն արտակարգ հանգրուանին այլ նաեւ տիրանալ իր ասպարէզի 2րդ ախոյեանութեան տիտղոսին:

Այսպէս, Կիրակի, 15 Յունիս 2003ին տեղի ունեցած Նիւ Ճըրզի Նէթսի դէմ արտակարգ մրցումի 6րդ ճակատումին, Սան Անթոնիօ Սփըրզ յաջողեցաւ իր դաշտին վրայ 88-77 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք, 4-2 արդիւնքով արարտել արտակարգ ճակատումներուն շարքը եւ վերջին հինգ տարիներուն 2րդ անգամ ըլլալով հանդիսանալ ախոյեան, մինչ կը սպասուէր, որ Նէթսի մարզիկները յաղթանակը տանելով 7րդ եւ ճակատագրական մրցում մը պարտադրէին:

Յատկանշականը այն էր, թէ Նէթս յաջորդաբար 2րդ տարին ըլլալով տեղի կու տար եւ կը կորսնցնէր տիտղոսը արտակարգ հանգր-



ուանին հասնելէ ետք եւ այդպիսով առիթը կու տար, որ յաջորդաբար 5րդ տարին ըլլալով ԷՆ. ՊԻ. Էյ.Ի ախոյեանը ըլլայ Արեւմտեան գօտիէն խումբ մը: Միշտ ալ ըսուած է, թէ Արեւմտեան շրջանի խումբերը աւելի զօրաւոր ու մակարդակով աւելի բարձր են քան Արեւելեան շրջանի խումբերը եւ իրապէս ալ վերջին 2 տարիներուն արտակարգ մրցումներէն յաղթական դուրս գալու Նէթսի ձախողութիւնը եկաւ աւելի եւս հաստատելու Արեւմտեանի գերակայութիւնը:

Կիրակի օրուան մրցումը եկաւ նաեւ հարցման նշան մը աւելցնելու Նէթսի մարզիչ Պրայըն Սքաթի որոշումներուն պտակութեան վրայ: Սքաթ, որ անցեալ տարեշրջանին մեծապէս քննադատուած էր Լէյքըրզի դէմ արտակարգ մրցումին վերջին վայրկեանին անակնկալօրէն փոխարինած ըլլալով իր հիմնական խաղացողները երբ տակաւին կարելի էր արդիւնքը յեղաշրջել, դարձեալ վիճելի քայլերու դիմեց Սփըրզի դէմ 6րդ ճակատումին արարտին:



Արդարեւ, մրցումին ամբողջ տեւողութեան Սփըրզ էր ետ մնացողը եւ սակայն չորրորդ քորթըրին վերջին 5 վայրկեաններուն Սփըրզի մարզիկները յաջողեցան սքանչելի խաղարկութիւն ցուցաբերելով նշանակել 19 կէտեր եւ այսպիսով փաստել, թէ արժանի են տիտղոսին: Զարմանալին այն էր, սակայն, որ մինչ Սփըրզի մարզիկները 4րդ քորթըրին կը սուրային եւ կը ստեղծէին արտակարգ հանգրուանին ընթացքին ամէնէն աւելի միակողմանի տիրապետութեամբ յատկանշուած 5 վայրկեանները, Նէթսի աստղերէն Քերի Քիթլըզ եւ Ռիչըրտ Ծէֆըրսըն կը պահուէին պահեստի նստարաններուն վրայ, թոյլ տալով, որ Լուքըս Հէրիսի եւ Ռոտնի Ռոնըրզի նման բաղդատաբար աւելի անփորձ ու երկրորդական մարզիկներ դէմ դնեն Սփըրզի սլացքին: Արտակարգի բոլոր մրցումներն ալ, դժբախտաբար, հարուստ եղած էին երկկողմանի անտեղի սխալներով եւ այդ միջոցին երբ Սփըրզ յաջողեցաւ ի վերջոյ գէթ 5 վայրկեան տեւողութեամբ անսխալական ու ճշգրիտ խաղարկութիւն ցուցաբերել, Նէթս մնաց ձեռնաձախ, որովհետեւ այդ միջոցին ան դաշտին վրայ չունէր անհրաժեշտ խաղացողներն ու կարողութիւնը՝ կասեցնելու համար մրցակիցներուն արշաւը:

Մրցումին ամառին Սքաթ ըսաւ, թէ պատճառը շատ հաւանաբար վերջին քորթըրին Սփըրզի կիրարկած կոշտ պաշտպանողական էր, որուն հետեւանքով իր մարզիկները դիմեցին արագ հարուածներու, որոնց ջախջախիչ տոկոսը վրիպեցաւ կողովէն աւելի եւս հաստատելով Սփըրզի գերակայութիւնը: Պէտք է նշել, նաեւ, թէ հակառակ առաջին 3 քորթըրներուն Նէթցի տիրապետութեան, անոր մարզիկները ընդհանրապէս լաւ խաղարկութիւն չի ցուցաբերեցին եւ մինչ խումբին փլէյ-օֆսի լաւագոյն սքորըրը՝ Քէնիըն Մարթըն 23 հարուածներէ միայն 3ը կը հասցներ իրենց նպատակին, Նէթցի միակ յաջող մարզիկն էր Մէյսըն Քիտ, որ 21 կէտ եւ 6 էսիսթ կատարելով շատ հաւանաբար աւելի եւս գրաւեց Սփըրզի պատասխանատուներուն ուշադրութիւնը, որոնք կը մտադրեն յառաջիկայ եղանակին իրենց կազմին միացնել Նէթցի հետ իր պայմանագրութիւնը ամառին Քիտը:

Այդ մէկուն անդրադառնալով, Քիտ ըսաւ. «Շատ մը առիթներ ունիս առջեւ ու փաստօրէն ազատ մարզիկ մըն եմ եւ հակառակ անոր, որ կը փափաքիմ Նէթցի հետ մնալ, բայց եւ այնպէս պէտք է բոլոր կարելիութիւնները լաւապէս քննեմ ու սերտեմ եւ այդ մէկը լուրջ մտածումի կը կարօտի»:

Վստահաբար, սակայն, Սփըրզի պատասխանատուները եւ մանաւանդ մարզիկները Կիրակի օրը չէին մտածեր անգամ Քիտի մասին, որովհետեւ անոնք զբաղած էին իրենց յաղթանակը տօնելով:

Արդարեւ Սփըրզի մարզիկ Թիմ Տանքըն ունեցաւ իր ասպարէզին ամէնէն գեղեցիկ խաղարկութենէն մէկը, երբ 21 կէտ, 20 ռիպաունտ, 10 էսիսթ եւ 8 պլոք շաթ կատարելով շատ մօտեցաւ իրագործելու «քոտրեփըլ տապըլ» մը եւ արժանացաւ տարուան լաւագոյն արժէքատր մարզիկի տիտղոսին (ԷՄ.Վի.Փի.): Տանքըն այսպիսով ամառականի 6 մրցումներէն իրաքանչիւրին նշանակած եղաւ միջին հաշուով 24.2 կէտ, 17 ռիպաունտ, 5.3 էսիսթ եւ վերջապէս 5.3 պլոք շաթ, այսպիսով կտրելով Փէթրիք Եոսիմկի 1994ին հաստատած մրցանիշը, երբ այս վերջինը յաջողած էր ամառական մրցումներուն միջին հաշուով 4.3 պլոք շաթ կատարել Նիւ Եորք Նիքսի հետ (Հիւսթըն Ռոքեթցի դէմ):

Միւս կողմէ, Կիրակի օրուան մրցումը բացառիկ հրաժեշտի մրցում մը եղաւ 14 տարիէ ի վեր Սփըրզի շապիկը կրող վերջին մարզիկ Տէյվիտ Ռոպինսընի համար, որ պասքէթպոլի աշխարհին հրաժեշտ տուաւ՝ իր վերջին մրցումին նշանակելով 13 կէտ եւ 17 ռիպաունտ: Ռոպինսըն, որ թեկնածու եղած է, որպէս էն. Պի. Էյ.ի բոլոր ժամանակներու լաւագոյն 50 մարզիկներէն մէկը, յաջորդաբար 6 տարի Թիմ Տանքընի հետ միասին կազմեց սքանչելի ու անփոխարինելի զոյգ մը, որուն առաջնորդութեամբ Սփըրզ արձանագրեց հարիւրաւոր յաղթանակներ եւ տիրացաւ 2 ախոյեանութեան բաժակներու: Այս երկուքը միշտ ալ լաւ յարաբերութիւն ունեցած էին իրարու հետ եւ այդ մէկը յստակօրէն ի յայտ եկաւ Կիրակի օրուան մրցումին ամառին, երբ շէմփելյնով «լուացուած» Թիմ Տանքըն դաշտէն դուրս եկած միջոցին՝ իր կնոջ վիտէօի մեքենան ձեռք ձգելով մեծ խանդավառութեամբ նկարեց Ռոպինսընի վերջին վայրկեանները իբրեւ պասքէթպոլիստ: Յաղթա-



նակի ու տօնախմբութեան «խենթ» վայրկեաններուն իսկ այս երկու աստղերը չմոռցան իրարու եւ փոխանակ իրաքանչիւրը իր անձնական յաղթանակն ու փառքը տօնելու, անոնք միասնաբար տօնեցին այդ յաղթանակը, քաջ գիտնալով, թէ միասին է, որ իրենց խումբը առաջնորդեցին յաղթանակին, հակառակ անոր որ Տանքընն էր միայն, որ արժանացաւ ԷՄ.Վի.Փի.ի տիտղոսին:

Ռոպինսըն, որ վերջերս 9 միլիոն տոլար յատկացուց հիմնելու համար անկարող մանուկներու անձնական դպրոց մը, ակնարկեց այս վերջին մրցումին ու պասքէթպոլի ասպարէզէն հեռանալու իր որոշումին եւ ըսաւ. «Վերջին մրցումս կատարեցի խումբիս դաշտին վրայ ու համակիրներու դիմաց եւ «աշխարհի ախոյեանութեան» տիրացաւ: Աւելի սքանչելի բան չեմ կրնար երեւակայել: Ասպարէզէս պիտի հեռանամ ճիշդ այն ժամանակ երբ կը գտնուիմ բարձրագոյն բեմին վրայ, այն բեմին, որուն վրայ գտնուիր իրաքանչիւր պասքէթպոլիստի երազն է»:

Միւս կողմէ, երկրորդ անգամ ըլլալով ԷՄ.Վի.Փի. ընտրուած Տանքըն (1999 եւ 2003) անդրադառնալով Ռոպինսընի հեռանալուն ըսաւ, թէ իրեն համար շատ տարբեր պիտի ըլլայ պասքէթը առանց Տէյվիտի, որովհետեւ Ռոպինսըն սկիզբէն ընկերակցած է իրեն եւ իրենք միասնաբար առաջնորդած են Սփըրզը, հետեւաբար Ռոպինսընի բացակայութիւնը մեծ բաց մը պիտի ստեղծէ եւ այդ բացը գոցելը բաւական դժուար պիտի ըլլայ:

Խումբին յաղթանակին եւ Ռոպինսընի մասին ակնարկութիւն մըն ալ ըրաւ խումբին մարզիչը՝ Կրէյ Փոփովիչ, որ ըսաւ. «Շատ ուրախ եմ, որ Տէյվիտ իր ասպարէզին վերջ դրաւ նման մրցումով մը: Ուրախ եմ նաեւ խումբին բոլոր մարզիկներուն համար անխտիր,



որովհետև անոնցմէ իրաքանչիւրը աստղ մըն է ինքնին եւ անոնք միասնաբար կը կազմեն գեղեցիկ ու սքանչելի խումբ մը: Անոնցմէ իրաքանչիւրը իր յատուկ կարողութիւնները ունի եւ զանոնք իրարու կապող միակ յատկանիշը իրենց մրցակցութեան ու պայքարի բուռն ոգին է»:

Աւելի ուշ, համակիրներուն ներկայանալու համար խումբը ուղղուեցաւ դէպի «Ալամոտոմ», ուր 9 տարի շարունակ խաղացած էր նախքան այս տարեշրջանին «ԷՍ.ՊԻ.ՍԻ. Սենթըր» փոխադրուիլը:

Վերադառնալով մրցումին, պէտք է ըսել, որ ընդհանուր առմամբ Սան Անթոնիո Սփըրզի մարզիկները յաջողեցան լաւ պասքէթպոլ խաղալ եւ արժանանալ տիտղոսին: Անոնք բոլորն ալ միասնաբար աշխատելով կրցան հնձել իրենց աշխատանքին պտուղը եւ եթէ Տանքըն ու Ռոպինսըն եղան բուն յաղթանակը կերտողները, հապա պէտք չէ անտեսել նաեւ միւս խաղացողները, ինչպէս՝ Սթեֆըն Ծէյսընը, որ հակառակ աւարտական հանգրուանի 6 մրցումներուն կատարած իր 26 թրթրնօվըրներուն, յաջողեցաւ վերջին մրցումին փայլիլ եւ նշանակել 17 կէտ, որոնց ինն չորրորդ թրթրըրին ընթացքին, ինչպէս նաեւ Սփիտի Քլէքսթընը, որ 13 կէտ նշանակեց եւ մեծ դեր խաղցաւ չորրորդ թրթրըրին, եւ վերջապէս արժանթիցի Էմանուէլ Ծինոպիլին, որ նշանակեց 11 կէտ: Հաւանաբար, Սան Անթոնիոյի միակ աստղը, որ իր բարձրութեան վրայ չէր գտնուեր ֆրանսացի Թոնի Փարքըրն էր, որ միայն չորս կէտ նշանակեց եւ յաճախ փոխարինուեցաւ Քլէքսթընով: Ան աւարտականի առաջին երեք մրցումներուն 63 կէտ նշանակելէ ետք, վերջին երեքին նշանակեց միայն 21 կէտ:

Նշենք, թէ երբ Սփըրզ 1999ին տիրացաւ ախոյեանութեան, Լէյքըրզի մարզիչը՝ Ֆիլ Ծէքսըն առարկեց ըսելով, թէ այդ ախոյեանութիւնը «բնական» ախոյեանութիւն մը չէր, որովհետև Սփըրզ անոր տիրացած էր միայն 50 մրցումներով, սակայն այս անգամ հարցը տարբեր է եւ Սփըրզ 100 տոկոսով արժանի է իր շահած տիտղոսին, իսկ աւելի հետաքրքրականը այն է, թէ Ռոպինսընի մեկնումով Փոփովիչ առիթը պիտի ունենայ յառաջիկայ տարեշրջանին համար իր խումբը օժտելու նոր մարզիկով մը, որ շատ հաւանաբար ըլլայ Նէթցի աստղը՝ Ծէյսըն Քիտ եւ կամ նոյնիսկ՝ Ծըրմէյն Օնիլ, իսկ անդին՝ Թոնի Փարքըրի խումբէն ներս մնալը շատ աւելի զօրաւոր պիտի դարձնէ Սփըրզը, ինչ որ կը սպառնայ յառաջիկայ եղանակին բաւական դժուարութիւն




պատճառել մնացեալ խումբերուն, եթէ այս վերջինները Սփըրզի յառաջխաղացքը կասեցնելու «դարման» մը չունենան:

Յամենայնդէպս, տակաւին բաւական երկար ժամանակ կայ եւ բոլոր խումբերն ալ առիթը ունին լաւապէս պատրաստուելու եւ իրենց մակարդակը բարձրացնելու համար:

Ն. Պ.

ԹԵՆԻՍ. ՈՒՒՄՊԸԼՏԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՐՄԱՏԱ»Ն ՏՊԱԻՈՐԵՑ...



Ուիմպլըյտընի մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումներուն, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան ապահովեց Բ. հանգրուանի իր տոմար 6-1, 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելով բրիտանացի իր մրցակիցը՝ Ալէքս Պոկտանովիչը:

Սարգսեանի նման Բ. հանգրուանի իր տոմար ապահովեց ճրդ դասուած արժանթիցահայ Դաւիթ Նալպանտեան, որ անցեալ տարի նոյն այս մրցաշարքին աւարտականին պարտուեցաւ Լէյթըն Հոլթէն: 21 տարեկան Նալպանտեան, որ 7-5, 6-4 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Վլատիմիր Վոլչքովը (Պիելոուսիա) Բ. հանգրուանին պիտի ճակատի պրազիլցի Անտրէ Սայի դէմ:

Աղջկանց մրցումներուն, զուիցերիահայ Մարի-Գայիանէ Միքայէլեան իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 7-5, 2-6 եւ 8-6 արդիւնքով պարտութեան մատնելով ամերիկացի Մարիսա Ըրվինը:

Բ. հանգրուանի մրցումներուն, Սարգիս Սարգսեան եւ Դաւիթ Նալպանտեան (դասուած՝ ճրդ), ապահովեցին Գ. հանգրուանի իրենց տոմարը:

Սարգսեան տիրապետելէ ետք իր մրցակիցին՝ 26րդ դասուած ամերիկացի Ծէյմս Պլէյքի վրայ, տարաւ վերջնական յաղթանակը, առանց առիթ տալու իր մրցակիցին, որ նոյնիսկ սէք մը շահի: Մրցումը վերջ գտաւ՝ 6 - 2, 7 - 6 եւ 6 - 2 արդիւնքով: Պրազիլցի Անտրէ Սա, որ Նալպանտեանի մրցակիցն էր 6 - 2, 7 - 5 եւ 6 - 2 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք, դուրս մնաց մրցաշարքէն:

Զուիցերիահայ Մարի - Գայիանէ Միքայէլեան չկրցաւ մրցաշարքը շարունակել, երբ Բ. հանգրուանին իր կատարած մրցումին 6 - 2 եւ 6 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց ճրդ դասուած ամերիկացի Ծենիֆըր Քափրիաթիէն:

Ուիմպլըյտընի մրցաշարքի Գ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ Եաբաթ օր, Սարգսեան դուրս մնաց մրցաշարքէն, երբ 6-4, 6-4, 2-6 եւ 6-4 արդիւնքով պարտութիւն մը կրեց Յրդ դասուած սպանացի Խուան Քարլոս Ֆերերոյէն: Դաւիթ Նալպանտեան բաւական դժուար յաղթանակ մը արձանագրեց, երբ 6-4, 5-7, 6-7, 6-4 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Քարոլ Քուլչերան (Սլովաքիա):

ՕԼԻՄՓԻՔ ՆԱՆԴԻՍԱՑԱԲ ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆ



Լիբանանի ֆուտբոլի ախոյեանությունն անապատվելով հանգրուանին, Օլիմպիք հանդիսացավ Լիբանանի ախոյեան՝ 0 - 0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Ահտի դէմ, «Ֆայնրլ Ֆոր»-ի մրցումներու ծիրէն ներս: Նախքան վերջին հանգրուանը արդէն իսկ Օլիմպիք 4 կէտի առաւելութիւն մը ունէր իր անմիջական մրցակից Նըժմէի վրայ, որ իր կարգին 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Անսարը, կը մնար 2րդ դիրքին վրայ: 3000 համակիրներու ներկայութեան կայացած այս մրցումին «որբ» կոչը նշանակեց Մոհամէտ Ղատտար, 29րդ վայրկեանին:

Օլիմպիք Ահտի դէմ իր մրցումին պէտք ունէր միայն մէկ կէտի, ախոյեան հանդիսանալու համար: Մօտաւորապէս 300 համակիրներու ներկայութեան Օլիմպիք յաջողեցաւ հաւասարիլ Ահտի հետ, հակառակ այս վերջինին ճնշումներուն:

Իսկ վերջին հանգրուանին Նըժմէի 2 - 0 յաղթանակը Օլիմպիքի դէմ ոչինչ փոխեց կացութենէն:

Այսպէսով Օլիմպիք առաջին անգամ ըլլալով հանդիսացաւ Լիբանանի ախոյեան, մրցաշարքին իր առաջին իսկ մասնակցութեամբ:

Նշենք, թէ Անսար կը մնայ Լիբանանի ախոյեանութիւնը ամէնէն աւելի շահած խումբը (11 անգամ), որուն կը յաջորդէ Հ.Մ.Ը.Մ. (7 անգամ):



1934ԷՆ (Ա. ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ) Ի ՎԵՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՆԵՐՈՒՆ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

- 1933-1934 Նահտա
- 1934-1935 Ամերիկեան համալսարան
- 1935-1936 Երկաթուղիի եւ նաւահանգիստի խումբը
- 1936-1937 Ամերիկեան համալսարան
- 1937-1938 Ամերիկեան համալսարան
- 1938-1939 Երկաթուղիի եւ նաւահանգիստի խումբը
- 1940-1941 Երկաթուղիի եւ նաւահանգիստի խումբը
- 1941-1942 Նահտա
- 1942-1943 Նահտա
- 1943-1944 Հ.Մ.Ը.Մ.
- 1944-1945 Հ.Մ.Մ.
- 1945-1946 Հ.Մ.Ը.Մ.
- 1946-1947 Նահտա
- 1947-1948 Հ.Մ.Ը.Մ.
- 1948-1949 Նահտա
- 1950-1951 Հ.Մ.Ը.Մ.
- 1953-1954 Հ.Մ.Մ.
- 1954-1955 Հ.Մ.Ը.Մ.
- 1955-1956 Ռասիակ
- 1956-1957 Հ.Մ.Մ.
- 1960-1961 Հ.Մ.Մ.

- 1962-1963 Հ.Մ.Ը.Մ.
- 1964-1965 Ռասիակ
- 1966-1967 Ծափպէ Մագրաս
- 1968-1969 Հ.Մ.Ը.Մ.
- 1969-1970 Ռասիակ
- 1972-1973 Նըժմէ
- 1974-1975 Նըժմէ
- 1987-1988 Անսար
- 1989-1990 Անսար
- 1990-1991 Անսար
- 1991-1992 Անսար
- 1992-1993 Անսար
- 1993-1994 Անսար
- 1995-1996 Անսար
- 1996-1997 Անսար
- 1997-1998 Անսար
- 1998-1999 Անսար
- 1999-2000 Նըժմէ
- 2000-2001 Թատամոն Սուր (հետագային չեղեալ համարուած)
- 2001-2002 Նըժմէ
- 2002-2003 Օլիմպիք Պէլոս

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

ՊԵՆԱԼԻՏԻ

Պոլսոյ մէջ երէկ ասարտեցան Եւրոպայի բաժակի թեթեւ աթլետիկայի մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Եւրոպայի 14 երկիրներու աղջկանց հաւաքականները եւ տղոց 12 հաւաքականները:

Հայաստանի աթլետները թէեւ գրաւեցին ընդհանուր դասաւորման ճրդ դիրքը, սակայն անոնք յաջողեցան այդ մրցումներուն ընթացքին բարելաւել իրենց նախկին մրցանիշները: Աղջկանց խմբային դասաւորման պարագլուխի դիրքը գրաւեց Էսթոնիա, իսկ տղոց առաջին դիրքը՝ Ռուսիան:

ՃԱՅՐԵՆԻ

Հայաստանի ճատրակի լաւագոյն վարպետ Վլատիմիր Յակոբեան ոչ հասնողիչ արդիւնք արձանագրեց, Ֆրանսայի մէջ ճատրակի միջազգային մրցաշարքին ասարտին գրաւելով ընդհանուր դասաւորման 9րդ դիրքը, միայն երեք կէտով: Վերջին հանգրուանի մրցումին, ան հաւասարութիւն մը արձանագրեց բրիտանացի Մայքըլ Էտըմսի հետ:

Տիտղոսին արժանացաւ ոռու Եւգենի Պարէւ, որ 9 հանգրուանէն հաւաքեց 6,5 կէտ:

Յակոբեանը պարտութեան մատնողներուն շարքին էր նաեւ Վիքթոր Քորչնոյ (Չուիցերիա), որ սակայն մրցաշարքին ասարտին գրաւեց դասաւորման վերջին դիրքը՝ 2,5 կէտով:

Պոլսոյ մէջ (Թուրքիա) իրենց ասարտին հասան Եւրոպայի ճատրակի անհատական ախոյեանութեան մրցումները, այսպիսով 39 վարպետներու իրաւունք տալով մասնակցելու ճատրակի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն:

Վրացի Ազմայփարաշվիլի իր կատարած վերջին մրցումին հաւասարութիւն արձանագրել էր առաւելագոյն 13 կէտերէն 9,5 կէտ ապահովել էր հանդիսացաւ Եւրոպայի ախոյեան:

Հայաստանի եւ աշխարհի 20 տարեկանէն վար պատանիներու ախոյեան Լեւոն Արոնեան իր վերջին մրցումին հաւասարութիւն արձանագրել էր 8,5 կէտ ապահովել էր տիրացաւ պրոնգ մետալին: 19ամեայ Լեւոն Արոնեանի արձանագրած այս արդիւնքը կը նկատուի պատուաբեր:

Հայրենի վարպետներ՝ Կարէն Ասրեան, Սմբատ Լպուտեան եւ Աշոտ Անաստասեան մրցաշարքը ասարտեցին Ցական կէտով:

Աշխարհի փոխ ախոյեան եւ Հայաստանի լաւագոյն վարպետ Վլատիմիր Յակոբեան, որ արդէն իսկ իրաւունք ստացած էր մասնակցելու աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, չմասնակցեցաւ Պոլսոյ մէջ տեղի ունեցած այս մրցաշարքին:

Քաբրիէլ Սարգսեան, Ռաֆայէլ Վահանեան եւ Արտաշէս Մինասեան թէեւ լաւ արդիւնքներ արձանագրեցին, սակայն բաւարար կէտերը չապահովելով իրաւունք չստացան մասնակցելու աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին:

Ըստ նախնական տուեալներու, աշխարհի ախոյեանութեան մասնակցելու իրաւունք ստացան ութ վարպետներ (վեց տղաք եւ երկու աղջիկներ)՝ Վլատիմիր Յակոբեան, Լեւոն Արոնեան, Քաբրիէլ Սարգսեան, Կարէն Ասրեան, Սմբատ Լպուտեան, Աշոտ Անաստասեան, Լիլիթ Մկրտչեան եւ Էլինա Գանիէլեան:

Նշենք, թէ Լիլիթ Մկրտչեան որպէս Եւրոպայի փոխ ախոյեանուհի արդէն իսկ իրաւունք ստացած էր մասնակցելու աշխարհի ախոյեանութեան: Իսկ Էլինա Գանիէլեան իր տոմսը ապահովեց շնորհիւ վերջին հանգրուանին իր արձանագրած յաղթանակին:

ԸՄՔԱՄԱՐՏ

ԱՊՀի երկիրներու մէջ տեղի ունեցող բանակայիններու ըմբշամարտի մրցումներուն, հայրենի ըմբիշ Ժիրայր Յովհաննիսեան (Վանաձորէն) 66 քկ. դասակարգին մէջ իր կատարած հինգ մրցումներուն բոլորին ալ յաղթանակներ արձանագրելով արժանացաւ ախոյեանութեան տիտղոսին:

ԹԵՆԻՍ

Թեհրանի մէջ (Իրան) տեղի ունեցած թեքուանտոյի միջազգային մրցաշարքի ասարտին, Հայաստանի հաւաքականը յաջողեցաւ գրաւել ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը, շահելով մէկ ոսկի եւ մէկ արծաթ մետալ: Ոսկի մետալին տիրացաւ Վարդան Վարդանեան, իսկ արծաթ մետալին՝ Վիգէն Սարգսեան:

ՅԱՒԹՊԱԼ

Եւրո - 2004ի գտումի մրցումներուն, Շաբաթ, 7 Յունիսին տեղի ունեցան 19 ճակատումներ, որոնց ընթացքին նշանակուեցաւ 53 կոլ:

Ամէնէն աւելի կոլերը նշանակուեցան (եօթ կոլ) Ուքրանիա - Հայաստան մրցումին, որ տեղի ունեցաւ Լվովի մէջ եւ վերջ գտաւ ի նպաստ հիւրընկալ կազմին՝ 4 - 3:

Պէտք է ըսել, որ Հայաստան հանդիսացաւ օրուան անբախտը, որովհետեւ «բախտաւոր» Ուքրանիա իր յաղթանակի կոլը նշանակեց մրցումին կորսուած վայրկեաններուն (93րդ):

Մրցումին հաշիւը փեւնալթիով բացաւ Ալլաք Սարգիսեան (13րդ), երբ մեծ քառակուսիին մէջ Օլէկ Լուծնի գետին բերաւ յառաջապահ Արման Քարամեանը: 28րդ վայրկեանին Ա. Սէ. Միլանի յառաջապահ Անտրիյ Շեվչենքոյի քոռնըրին վրայ՝ Օլեքսանտր Կորշքով հաւասարեցուց արդիւնքը:

Հայաստան յաջողեցաւ անգամ մը եւս յառաջանալ մրցակիցին վրայ, երբ նոյնինքն Սարգիսեան քառասուն մեթրէն զօրաւոր հարուածով պարտութեան մատնեց բերդապահ Տմիթրո Շուրքովը:

Շեվչենքոյի նշանակած երկու կոլերուն շնորհիւ (66րդ՝ փեւնալթիով եւ 73րդ), թէեւ Ուքրանիա 3 - 2 յառաջացաւ, սակայն 74րդ վայրկեանին Արթուր Պետրոսեան լուրեան մատնեց դաշտին տէրերուն համակիրները, երբ նշանակեց իր կազմին հաւասարութեան կոլը (3 - 3):

Կ'ենթադրուէր, որ մրցումը այդպէս ալ պիտի ասարտի, սակայն բախտը ժպտեցաւ Սերիյ Ֆիտտորովի, որ 93րդ վայրկեանին նշանակեց իր կազմին յաղթանակի կոլը, պարտութեան մատնելով Հայաստանի բերդապահ Ռոման Պերեզովսքին:

Մրցումէն ետք, Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբին ոռումանցի մարզիչը՝ Միհայ Սթոյքա, ըսաւ. «Ոչինչ կրնամ ըսել մարզիկներու մասին. դժբախտաբար չար բախտը մեզի հետ էր: Ա. կիսախաղին, անակնկալի բերինք դաշտին տէրերը, մինչ Բ. կիսախաղին աւելի հակայարձակումներ է, որ կազմակերպեցինք: Ուքրանացիներուն աւելի տոկուն ֆիզիքականը, ինչպէս նաեւ Շեվչենքոյի փորձառութիւնը պատճառ դարձան անոնց յաղթանակին: Երկու բան կու գամ ըսելու սակայն. Առաջինը, որ գլխահակ պիտի չվերադառնանք Հայաստան, իսկ երկրորդը՝ յառաջիկայ երեք մրցումներուն, մինչեւ մրցաշարքին ասարտը նոյն ոգիով պիտի պայքարինք»:

Իր կրած այս պարտութենէն ետք, Հայաստան չորս կէտով մնաց չորրորդ դիրքին վրայ եւ գրեթէ իր յոյսերը կորսնցուց Փորթուգալի տոմս մը ապահովելու համար, որովհետեւ առաջին երեք դիրքերը գրաւողները բաւական հեռացան իրմէ:

